

COVID - 19

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՋԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՆՊԱՍՏՆԵՐ ԿՅԱՏԿԱՑՎԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԿՈՐՑՐԱԾՆԵՐԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԴԵՆ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ

Ապրիլի 24-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց կորոնավիրուսի տարածումը կանխելու միջոցառման շրջանակներում համակարգող խորհրդին առընթեր հակաճգնաժամային տնտեսական խնդիրների, որի ընթացքում ներկայացվեց երկրի կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագիրը:

ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԽԵՐԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան խոսեց արտակարգ դրության պայմաններում սահմանափակումների վերացման և էկոնոմիկայի աշխուժացման փուլերի մասին: Նրա խոսքով, առաջին փուլում, ապրիլի 27-ից այլևս չի արգելվի մարդատար ավտոմեքենաների, տաքսիների տեղաշարժի, օնլայն առևտրի և ագրարային բաց շուկաների գործունեությունը: Երկրորդ փուլում, ենթադրաբար երկու շաբաթ անց, կվերացվի շինարարության, շինարարության վերահսկողության, շինանյութերի արտադրության, ավտոսպասարկումների, համակարգիչների և անձնական կենցաղային իրերի վերանորոգման, զբոսայգիների հետ կապված գործունեության արգելքը:

Երրորդ փուլում կբացվեն մեծածախ խանութները, բացառությամբ՝ մեծ հանրախանութների,



(Հարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱԶԳՎԵՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 22-Ը



Ելնելով նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի՝ Վրաստանի կառավարությունը, հենվելով վարակի տարածումը կանխելու միջոցառման շրջանակներում համաճգնաժամային տնտեսական խնդիրների վրա, երկրի ղեկավարին դիմեց արտակարգ դրությունը եւս մեկ ամ-

հնչյախ արդեն հաղորդել ենք, մարտի 21-ին Վրաստանի կառավարությունը առաջադրել, երկրի խորհրդարանը հավանության արժանացրել, իսկ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին ստորագրել էր երկրի ողջ տարածքով մինչեւ ապրիլի 21-ը արտակարգ դրություն հայտարարելու մասին դեկրետը:

սով երկարաձգելու հարցով խորհրդարանի հատուկ նիստ հրավիրելու առաջարկությամբ: Ապրիլի 21-ին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, ընդառաջելով կառավարության որոշմանը, ստորագրեց երկրի ողջ տարածքով արտակարգ դրությունը մինչեւ մայիսի 22-ը երկարաձգելու մասին որոշումը:

Ապրիլի 22-ին անցկացվեց Վրաստանի խորհրդարանի հատուկ նիստը, որի աշխատանքին մասնակցեց եւ արտակարգ դրության ժամկետի երկարաձգման հիմնավորման խոսքով հանդես եկավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին: Խորհրդարանում արտակարգ դրության երկարաձգման հարցով ելույթ ունեցավ կառավարության աշխատակազմի ղեկավար Նաթիա Մեզվրիշվիլին:

Բուռն քննարկումից հետո, արտակարգ դրության ժամկետի երկարաձգմանը մինչեւ մայիսի 22-ը աջակցեց 97 պատգամավոր, 10-ը դեմ քվեարկեց:

ԱՌԱՋԻՎԱ 2-3 ՀԱՐԱԹՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՊԱՍՎՈՒՄ Է ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՄԵՆԱԿՏԻՎ ՈՒ ՎԱՎԱԹՆԱԿԵՏԱՅԻՆ ՓՈԽԸ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 144 ՀԵՆՈՒՄՈՍԱՀԱՄԱՐԻՆ

Ապրիլի 21-ին Վրաստանի վարչապետի մամուլ խոսնակ Իրակլի Չիքովանին հերթական մամուլի ասուլիսին, անդրադառնալով արտակարգ դրության և կարանտինային պայմանավորված ժամկետի երկարաձգման հարցին, հայտարարեց, որ ընդլայնվում են «կլաստերները» և ավելի ու ավելի է բարդանում բացահայտել աղբյուրը, որտեղից է տարածվում այս «կլաստերը», հետևաբար, կարելի է համարել, որ երկիրը կորոնավիրուսի լայնածավալ ներքին տարածման փուլում է:

- Կորոնավիրուսի գլոբալ մարտահրավերը շատ ծանր կարտացոլվի ինչպես յուրաքանչյուր քաղաքացու, այնպես էլ՝ մեր երկրի էկոնոմիկայի վրա, եւ մենք քաջ գիտակցում ենք, որ մեզանից յուրաքանչյուրը սա լավ եւ ճշգրիտ կերպով է ընկալում: Վրաստանի կառավարության պայքարը կորոնավիրուսի դեմ ճանաչվել է արդյունավետ, քանի որ մեր երկրում, դեռևս առաջին փաստի արձանագրումից մեկ ամիս առաջ, Վրաստանի իշխանու-

թյունն սկսեց ձեռնարկել գործուն և նպատակաուղղված միջոցներ, որոնք կխոչընդոտեին կորոնավիրուսի տարածումը: Իհարկե, այս գործընթացը եղել է հետևողական, ծրագրից համապատասխան եւ յուրաքանչյուր որոշում հիմնված է եղել մասնագետների և մեր փորձագետների կարծիքի վրա: Հենց դրա արդյունքն է, որ այս պահի դրությամբ մենք ունենք կորոնավիրուսի 408 դեպք եւ

(Հարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՆՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՅՈՒՆ



Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցի օրը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը, Աժ նախագահ Արարատ Միրզոյանը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Խոնարհումի արարողությունում ուղեկցվեց հանրահայտ դաշնակապար, Հայաստանի վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանի կատարմամբ:

Ցեղասպանության 105-րդ տարելիցի առթիվ հատուկ ուղերձով հանդես եկան Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու նախագահ Արմեն Սարգսյանը: Նրանք երախտիքի խոսքեր ուղղեցին Հայոց Ցեղասպանությունը ճանաչած երկրներին եւ համաշխարհային հանրությանը կրկին կոչ արեցին Մեծ Եղեռնի ճանաչմանը վճռական «Ոչ» ասել ազգային խտրականության, ժխտողականության, պատմության էջերի վերանայման քաղաքականությանը:

(Հարունակությունը՝ 7-րդ էջում)

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՂԵՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ



Աշխարհով մեկ տարածված համաճարակը չէր կարող սակայն խոչընդոտել Հայոց Ցեղասպանության սրբադասված նահատակներին հիշելու եւ ոճրագործությունը դատապարտելու արարողությունները:

2020 թվականի ապրիլի 23-ին, ժամը 21:00-ին, վիրահայերը իրենց տներում մոմ վառեցին ու աղոթք բարձրացրին անմեղ զոհերի հոգու խաղաղության համար: Վրաստանի տարբեր շրջանների եւ մայրաքաղաք Թբիլիսիի հայ ազգաբնակչությունը միացավ աշխարհով մեկ ընթացող առցանց քայլարշավին: Ապրիլի 24-ին, ժամը 12:00-ին

(Հարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՒՐԲ ԿՐԱՎ ԵՐՈՒՄԱՂԵՄԻՑ

ԵՐՈՒՄԱՂԵՄ. «ԼՈՒՅՍԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՆՑ ՈՒՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԻ

ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԵՔ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ

Ապրիլի 18-ին Երուսաղեմի Սուրբ Հարության տարածարում տեղի ունեցավ «Լույսի» արարողությունը, սակայն առանց ուխտավորների և հավատացյալների:

Ինչպես տեղեկացրեց Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ Հայր Կորյուն վարդապետ Բաղդասարյանը, Իսրայելի կառավարության որոշմամբ, արարողությունը մասնակցեց միայն 10 հոգեւորական. երեք հայ, երեք հույն, մեկ ղպտի, մեկ ասորի (վերջիններս Սուրբ Երկրում Հայ Առաքելական Եկեղեցու հետեւակ համայնքներ են եւ, որպես այդպիսին, իրավունք ունեն մասնակցելու արարողության որոշ մասերի), երկու ոստիկան, մեկ լուսանկարիչ եւ մեկ հեռուստաօպերատոր: Չնայած դրան, դիվանապետի հավաստմամբ, արարողությունը անցկացվեց «Ստատուս քվո»-ով նախատեսված ընթացակարգով, եւ Հայ եկեղեցու որեւէ իրավունք չի խախտվել: Արարողությունը առցանց հեռարձակվում էր Greek City Times-ը:

COVID - 19

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՋԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչպես նաև բոլոր տեսակի շուկաները, բոլոր արտադրություններն ու հրատարակչությունները:

Չորրորդ փուլում կբացվեն հանրախանութները, բացօթյա ռեստորաններն ու տեղում սպասարկող սննդի օբյեկտները, ֆինանսական բոլոր սպասարկումները, գեղեցկության սրահներն ու էսթետիկ բժշկության կենտրոնները:

Հինգերորդ փուլում կբացվեն փակ շուկաները, բոլոր ռեստորաններն ու սննդի օբյեկտները:

Իսկ վեցերորդ փուլում կբացվեն ժամանցի, մարզական-առողջական, ստեղծագործական գործունեության, ազարտային եւ շահույթի խաղային բիզնեսի օբյեկտները, հյուրանոցները, հանրակրթական հաստատությունները եւ այլն:

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ՄԱՑԱԾՆԵՐԸ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ ԱՄՍՎԱՆ 200 ԼԱՐԻ

Հակաճգնաժամային ծրագրերը ներկայացնելիս Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան մասնավորապես խոսեց համավարակի արդյունքում աշխատանքը կորցրած քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու հարցի մասին եւ հայտարարեց, որ նրանք վեց ամսվա ընթացքում ամսական օգնության կարգով կստանան 200-ական լարի, այսինքն՝ ընդհանուր ամսամբ 1200 լարի:

Վարչապետի խոսքով, վերոնշյալ օգնությունից կկարողա-

նան օգտվել նրանք, ովքեր մինչեւ համավարակը պաշտոնապես համարվում էին աշխատող եւ գործազուրկ են դարձել համավարակի պատճառով: Գիորգի Գախարիայի հավաստմամբ, նման օգնությանը կարող է հավակնել շուրջ 350 հազար քաղաքացի:

- Մեզ համար առանձնակի նշանակություն ունեն այդ օգնության տրամադրումը: Օգնությունը կցուցաբերվի COVID-ի հիմնադրամից: Դրանից կկարողանա օգտվել առնվազն 350 հազար քաղաքացի, ինչը նշանակում է, որ բյուջեից կառանձնացվի 460 միլիոն լարի, - հայտարարեց վարչապետը:

2021 ԹՎԱՎԱՆԻՑ ԾՐԱԳՐՎՈՒՄ Ե ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Հանդես գալով կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագրի շնորհանդեսին՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ 2021 թվականից երաշխավորված կարգով բոլոր կենսաթոշակառուների կենսաթոշակները կավելացվեն 20-ական լարիով, իսկ 70-ն անց տարեցների կենսաթոշակները՝ 25-ական լարիով: Նրա խոսքով, կենսաթոշակները կավելացվեն լարիի արժեզրկման ցուցանիշի հաշվառմամբ:

- Այնուհանդերձ, գլոբալ համավարակի հետեւանքների հաղթահարման համար կպահանջվեն տարիներ: Հետեւաբար, մենք որոշեցինք արդեն այսօր քայլեր ձեռնարկել եւ մեր գործընկերների հետ պայմանավորվածությամբ, մշակեցինք մեր ամե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

183 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԴԵՍ ԴԱՅՔԱՐԻ ՈՒՂԵՂԱՅՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Ապրիլի 21-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հեռախոսազրույց ունեցավ Եվրամիության գերագույն ներկայացուցիչ, փոխնախագահ ժոզեֆ Բորելի հետ:

Հեռախոսազրույցի ընթացքում կողմերը քննարկեցին կորոնավիրուսի համավարակային պայթյունի առնչությամբ համավարակի դեմ պայքարի հարցերը եւ դրա սոցիալական ու տնտեսական արդյունքները: Նշվեց, որ Եվրամիությունը օգնության տեսքով Վրաստանին կհատ-

կացնի 183 միլիոն եվրո: Ժոզեֆ Բորելին ընդգծեց, որ Վրաստանին Եվրամիությունը օգնություն է տրամադրում այս ճգնաժամը հաղթահարելու գործում: Նոր կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամին արձագանքելու շրջանակներում, Եվրամիու-

թյունն Արեւելյան գործընկերության 6 երկրներին հատկացրել է աջակցության փաթեթ: 80 միլիոն եվրո օգնությունը նպատակաւղղված է առողջապահության ոլորտում անհետաձգելի կարիքների համար, իսկ 883 միլիոն եվրոն՝ սոցիալական եւ տնտեսական իրավիճակի վերականգնման կարճաժամկետ կարիքները բավարարելու համար, օգնության տեսքով Վրաստանը կստանա ավելի քան 183 միլիոն եվրո:

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ-ՀԱՐԹԱԿ


Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնալան մասնակցեց Թբիլիսիի պետական համալսարանի էկոնոմիկայի միջազգային դպրոցի (ISET) եւ «ISET»-ի հետազոտական ինստիտուտի «Կորոնավիրուսի հետագա տնտեսական վերականգնման հեռանկարները» առցանց հարթակի քննարկմանը:

Առցանց բանավեճին մասնակցեցին նաև Չինաստանում, Մոնղոլիայում եւ Կորեայում Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Մարտին Ռայզերը, Եվրամիության երկրներում Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Արուսի Բաներջին եւ «ISET»-ի հետազոտական ինստիտուտի տնօրեն Թամար Սուլուխիան: Կոնֆերանսին քննարկվեցին այն քայլերը, որոնք երկրները, այդ թվում՝ փոքր երկրները պետք է ձեռնարկեն հետկորոնավիրուսային ժամանակաշրջանում:

- Վրաստանը պատրաստ է գլոբալ էկոնոմիկայում հանդես

գալ նոր դերում որպես այլընտրանքային հարթակ բիզնեսի համար եւ խոշոր կորպորացիներին առաջարկեց բիզնեսը տեղափոխել մեզ մոտ, - հայտարարել է Նաթիա Թուրնալան:

Նրա խոսքով, դիվերսիֆիկացիան եւ արտադրության տարբեր վայրեր տեղափոխելը բիզնեսի ապահովագրության նպատակով, կլինի նոր ուղղություն:



COVID-19.

ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 2,7 ՄԻԼԻՈՒ ՆՇԱՍԱԳԻԾԸ

Ապրիլի 24-ի տվյալներով, աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակով COVID-19-ով վարակվածների թիվը հասել է 2 միլիոն 748 հազար 986-ի, մահացածներինը՝ 192 155: Ապաքինվել է 757 775 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում հայտնված ԱՄՆ-ում 886 709 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 50 243 է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է դարձել աշխարհում: Ընդհանուր ցուցանիշով երկրորդ տեղում գտնվող Իսպանիայում հաստատված դեպքերի թիվը 219 764 է: Մահացության ցուցանիշը 22 524 է: Իտալիան վարակվածների թվով երրորդն է: Այստեղ հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 189 973 է: Մահացել է 25 549 մարդ: Կորոնավիրուսից վարակվածության ցուցանիշով հաջորդը Ֆրանսիան է. եվրոպական այդ երկրում գրանցվել է 158 183 հաստատված դեպք, մահացել է 21 856 մարդ: Վարակվածության ցուցանիշով Ֆրանսիային հաջորդում է Գերմանիան, որտեղ 153 393 հաստատված դեպք կա, մահացել է 5 575 մարդ: Մեծ Բրիտանիայում կա 138 078 հաստատված դեպք: Մահացածները 18 738 են: Թուրքիայում վարակակիրների թիվը հասել է 101 790-ի, մահացածներինը՝ 2 491-ի: Չինաստանին շրջանցել է Իրանը: Այստեղ հաստատված դեպքերի ընդհանուր թիվը կազմում է 88 194: Երկրում վարակի բռնկումից ի վեր կորոնավիրուսի հետեւանքով մահացել է 5 574 մարդ:

Վարակի ծագման երկիր Չինաստանն առանձնանում է 82 804 վարակվածով: Մահացել է 4 632 մարդ: Չինաստանին հաջորդում է Ռուսաստանը, որտեղ վարակվածների ընդհանուր թիվը 68 622 է: Ռուսաստանում մահացածների թիվը հասնում է 615-ի: Բրազիլիայում հաստատված դեպքերի թիվը 50 230 է, Բելգիայում 44 293, Կանադայում 42 110, Նիդերլանդներում 36 535 է:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԵՄ առաջնորդները հաստատել են «Կորոնավիրուս»-ի համաճարակի հետեւանքով տուժած անդամ երկրների օգնության ծրագիրը: Տեսակոնֆերանսին ԵՄ ղեկավարները համաձայնեցին ստեղծել հիմնադրամ տնտեսությունը վերականգնելու համար, ինչը կապված կլինի յոթ տարվա բյուջեի կազմակերպման հետ:

Եվրամիության խորհուրդը հանձնարարել է Եվրահանձնաժողովին մշակել ապագա հիմնադրամի մանրամասները: Եվրահանձնաժողովը նախագիծը կներկայացնի մայիսի 6-ին:

ԹՈՒՐԲԻԱ

ՆՈՐ ԵՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄՊԱՆՈՒՄ Ե ԴԵՖՈՒՍՈՎ

Թուրքիան համավարակից ամենից շատ տուժած երկրների շարքում է: Վարակակիրների թվով այդ երկիրը 9-րդն է ամբողջ աշխարհում, իսկ համաճարակաբանական բարձրակետը դեռ առջեւում է: Սակայն, շատ ավելի մեծ ահազանգ է երկրի տնտեսության վիճակը: Պետության միջազգային պահուստներն արագ ընկնում են լիրայի հետ միասին, իսկ տարադրամային վարկերի ծավալը, որոնք երկրի ընկերությունները պետք է մարեն առաջիկա 12 ամսվա ընթացքում, գերազանցում է ՀՆԱ-ի մեկ քառորդը: Թուրքիան «հնարավորություն ունի» դառնալ առաջին երկիրը, որը դեֆոլտ կհայտարարի համավարակի պատճառով:

ՄԵԾ ԵՐԵՆՆ

ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կատարվեց բարեխոսական կարգ՝ ի հիշատակ Հայոց Ցեղասպանության Սուրբ նահատակների: Արարողությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սարգսյանը, դեսպանության դիվանագիտական կազմը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը, թբիլիսահայ հասա-

րակայնության ներկայացուցիչներ: Հավարտ արարողության, Կիրակոս վարդապետը, խոսելով օրվա խորհրդի մասին, իր խոնարհումը բերելով Մեծ Եղեռնի անմեղ զոհերի սրբադասված նահատակներին, կարեւորեց Ցեղասպանության համընդհանուր դատապարտումն ու ճանաչումը՝ հայցելով մարդկությանը նման ռճիրներից զերծ պահելու, աշխարհում խաղաղություն պահպանելու եւ երկր-

ներին զարգացում ու առաջընթաց բերելու մեր սուրբ նահատակների բարեխոսությունն առ Աստված:

Ներկաները ծաղիկներ խոնարհեցին եկեղեցու բակում կանգնեցված Հայոց Ցեղասպանության զոհերի Հիշատակի խաչքարի պատվանդանին:

Վիրահայությունը միջոցառմանը հետեւում էր առցանց հեռարձակմամբ:

ՄՈՒՍՏԱՆԱ ԽԱՉՏՐՅԱՆ

ԴԻՍԿՎԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԻՆՔՆԱՅՈՒՉԱԿ ԱԲԽԱԶԻՎՅԻ ՆԱԽԱԳԱՐԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Աբխազիայի ինքնահռչակ հանապետությունում մարտի 31-ին անցկացված այսպես կոչված նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ձայների 56,5 տոկոսով հաղթեց Ասլան Բժանիան: Ապրիլի 23-ին կայացավ ինքնահռչակ հանրապետության նախագահի երկրորդ փուլի արարողությունը, որից հետո դե ֆակտո գործադիր իշխանության դե-

կավար, վարչապետ Վալերի Բզանբան կառավարության հրաժարականի դիմումով դիմեց նորընտիր նախագահին: Կառավարության հրաժարականի դիմումը բավարարվել է:

Ստացված տեղեկության համաձայն, ինքնահռչակ Աբխազիայի դե ֆակտո կառավարությունը կղեկավարի Ալեքսանդր Անկվաբը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

COVID - 19

ԱՌԱՋԻՎԱ 2-3 ՇԱԲԱԹՆԵՐԻ ԸՆԹԱՆՔՈՒՄ ՄՊԱՍՎՈՒՄ Ե ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՄԵՆԱԿՏԻՎ ՈՒ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԱՅԻՆ ՓՈՒԼԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ոչ թե ավելի շատ,- հայտարարեց Իրակլի Չիքովանին:

Նրա խոսքով, մասնագետների վերլուծության հիման վրա, հնարավոր է ասել, որ առաջիկա 2-3 շաբաթները կհանդիսանան վարակի տարածման ամենակտիվ եւ գագաթնակետային փուլը:

- Համապատասխանաբար, այսօր իշխանության որոշումներն ստանում են առավել մեծ նշանակություն: Շարունակները ձեռնարկել այն անհրաժեշտ քայլերը, որոնք կդադարեցնեն երկրում վարակի գանգվածային տարածումը, որպեսզի

առաջիկայում արտիճանաբար չեղարկենք սահմանափակումները,- ընդգծեց Վրաստանի վարչապետի մամուլ խոսնակը:


Իրակլի Չիքովանին անդրադարձավ նաեւ արտակարգ դրության հարցերով կառավարական 144 եւ արտակարգ իրավիճակների 112 թեժ գծերի ծառայությունից օգտվելու հարցին՝ նշելով, որ արտակարգ դրության հարցով պետք է կապվել միայն 144-ի հետ, իսկ 112-ը թողնել շտապ դեպքերի համար:

Ըստ նրա, միայն մեկ օրվա ընթացքում թեժ գիծ՝ 144, ավելի քան 260 հազար զանգ է գրանցվել եւ կասեցվել աշխատանքը:

- Իհարկե, մենք հասկանում ենք, որ



այդ սահմանափակումները բարդ է հանդուրժել, բայց, կրկնում են, դրանք պարտադիր միջոցներ են, որոնք անհրաժեշտ են մեր երկրի համար եւ «COVID -19»-ի դեմ պայքարը հաջողությամբ շարունակելու համար,- ասաց Իրակլի Չիքովանին:



431 ՎԱՐԱԿՎԱԾ, 132 ԱՊՎԵՒՎԱԾ ԵՎ 5 ՄԱՐԱՑԱԾ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 24-ի դրությամբ, Վրաստանում հայտնաբերվել է կորոնավիրուսի վեց նոր դեպք: Կառավարության stopcov.ge կայքի տվյալներով, Վրաստանում մինչ այժմ հաստատվել է կորոնավիրուսի 431 դեպք, այդ թվում՝ 132 ապաքինված:

Միաժամանակ, Վրաստանի երեք քաղաքացի արտասահմանից հայրենիք է տեղափոխվել բուժօգնություն ստանալու:

Կորոնավիրուսի հետեւանքով երկրում մահացել է հինգ հիվանդ:

5 888 քաղաքացի գտնվում է կարանտինային ռեժիմում, իսկ 571-ը՝ ստացիոնար հսկողության տակ:

ՆՎԱԶԵԼ Ե ԱՐՏԱՔԻՆ

ՄՈՒԿՏՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության նախնական տվյալներով, 2020 թվականի հունվար-մարտ ամիսներին առեւտրաշրջանառությունը (առանց չհայտարարագրված առեւտրի) կազմել է 2733.9 միլիոն դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պակաս է 2.7 տոկոսով:

Նախնական տվյալներով, արտահանումը կազմում է 778.2 միլիոն դոլար (5,9 տոկոսով պակաս), իսկ ներմուծումը՝ 1995.8 մլն դոլար (1,4 տոկոսով պակաս):

ԵՐԿՐԱՐԱԶԳՎԵԼ Ե ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՉԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի գլխավոր դատախազության մամուլի ծառայության տեղեկատվությամբ, երկրում կորոնավիրուսի տարածումը կանխելու եւ երկրում սոցիալական հեռավորությունը պահպանելու նպատակով, Վրաստանի դատախազությունը մինչեւ մայիսի 22-ը երկարաձգել է քրեակատարողական հիմնարկում գտնվող մեղադրյալների հեռախոսազանգերի տեղադրությունը:

Այդ առաջարկությամբ, Վրաստանի դատախազությունն արդեն դիմել է արդարադատության նախարարությանը:

ԹԵՆԳԻՉ ՅԵՐՅՎԱՅԵ. «ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ՊԵՏՔ Ե ԶՄՊԵՆՔ, ԵՎ ԴՐԱ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՌԿԱ ԵՆ»

Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Յերցվաձեն մեկնաբանում է, թե ինչ են նշանակում «պետք է սովորենք ապրել կորոնավիրուսի հետ» խոսքերը:

Ցերցվածի հայտարարությամբ, երկիրը մշտապես չի կարող լինել արտակարգ դրության ռեժիմում, եւ քանի որ քիչ է սպասումը, որ վարակը

կարելու է: Բարեբախտաբար, մեզ մոտ վերջին մի քանի օրում նվազել է վարակվածների թիվը: Ունենք 5 մահվան դեպք, ամենացածր ցուցանիշներից մեկն է աշխարհում: Մենք պետք է զսպենք վարակը, մի կերպ պահենք այս մակարդակի վրա: Հնարավոր է՝ նվազի վարակակիրների թիվը, սակայն մենք անվերջ չենք կարող շարունակել սահմանափակումները, կարանտինի պահանջները, որոնք գործում են առանձին շրջաններում: Ուստի, պետք է սովորենք ապրել կորոնավիրուսի հետ: Քանի որ քիչ է սպասումը, որ վարակը շուտով կվերանա, պետք է ունենանք վարակակիրների նվազագույն քանակ, որպեսզի տարածման եւ վարակի հաճախականությունը մեծ չլինի,- հայտարարեց Թենգիզ Յերցվաձեն:



շուտով կվերանա, պետք է ունենանք վարակակիրների նվազագույն քանակ, որպեսզի տարածման եւ վարակի հաճախականությունը մեծ չլինի:

Թենգիզ Յերցվաձեի մեկնաբանմամբ, կարելու է, զսպենք համավարակը եւ դրա նախանշաններն արդեն ունենք:

- Սա յուրահատուկ արտահայտություն է, եւ պետք է լինի ճիշտ ընկալված: Այլեւս չունենք նոր դեպքերի աճ, որը շատ

ՊԱՍՏԱ ԻՄԱՅԵ. «ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՏԱՐԻ ԿՊԱՅԱՆՋՎԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ»

Վրաստանի բնակչությանը կպահանջվի առնվազն մեկ տարի, որպեսզի կորոնավիրուսի համավարակի ավարտից հետո վերադառնա բնականոց կյանքի: Այս մասին հայտարարել է Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաստա Իմնաձեն:

Ըստ նրա, գործող սահմանափակումներն աստիճանաբար կհանվեն: Այնուամենայնիվ, ընտանեկան կամ ընկերական հավաքույթների արգելքը կմնա ուժի մեջ դեռ երկար ժամանակ:

- Ինչ վերաբերում է բնականոն կյանքին վերադառնալուն, ապա, հավանաբար, առնվազն մեկ տարի կպահանջվի հաղթահարելու այն ամենը, ինչ կարող է լինել,- հայտարարել է Իմնաձեն:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի փոխտնօրենը չի բացառում, որ ամռանը կգտնվի դեղամիջոցը, որն ուղղակի կազդի նոր կորոնավիրուսի՝ COVID-19-ի վրա:

Իմնաձեն խոսել է նաեւ կորոնավիրուսի համաճարակի երկրորդ ալիքի հավանականության մասին: Նա հիշեցրել է, որ իսպանական գրիպը, որը մուլեգանել էր աշխարհում 1918-1920 թվականներ-

ին, երկու ալիք ուներ:

- Սա շատ չբացահայտված հիվանդություն է, ուստի մենք շատ ենք վախենում նախօրոք կանխատեսումներ անել, այդ թվում՝ կոլեկտիվ իմունիտետ ստեղծելու առումով եւ այլն: Մենք ունենք այսպես կոչված, իսպանական գրիպի պատմությունը, որի համավարակը երկու ուժեղ ալիք ուներ... Մենք ստիպված կլինենք ապրել վիրուսի հետ եւ մեր ապրելակերպում որոշ բաներ փոխել,- նշել է Իմնաձեն:

Մայիսի սկզբին համաճարակաբաններն ակնկալում են կորոնավիրուսային վարակի դեպքերի զգալի աճ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՉԻ ՔՆՆԱՐԿՎԵԼ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է տեղեկատվություն ընթացիկ տարվա մարտի 31-ից մինչեւ օրս արտակարգ դրության եւ կարանտինի ռեժիմի խախտումների վիճակագրության վերաբերյալ: Գերատեսչության տեղեկատվությամբ, հաշվետու ժամանակահատվածում իրավախախտում է թույլ տվել 5044 ֆիզիկական եւ իրավաբանական անձ: Ընդհանուր առմամբ, դուրս է գրվել շուրջ 16 միլիոն լարիի տուգանք:

Ինչպես արդեն հաղորդել ենք, երկրում արտակարգ դրության, իսկ առանձին վայրերում՝ կարանտինի հայտարարման պատճառով, Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, ըստ որոնց, արտակարգ դրության կանոնների խախտումն թույլ տված ֆիզիկական անձը տուգանվում էր 3000, իսկ իրավաբանական անձը՝ 15 հազար լարիով:

Հաշվի առնելով կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական ծանր վիճակը, Վրաստանի կառավարությունը նպատակահարմար գտավ նվազեցնել իրավախախտման տուգանքների չափերը եւ, վարչական օրենսգրքում կատարված նոր փոփոխության համաձայն, կարանտինի կամ մեկուսացման կանոնները խախտե-

լու համար ֆիզիկական անձը, 3000-ի փոխարեն, կտուգանվի 2000 լարիով, իսկ իրավաբանական անձը, նախկին 15 հազարի փոխարեն, ոպես տուգանք կմուծի 10 հազար լարի:

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Անրի Օխանաշվիլին, սույն փոփոխությունը խորհրդարանի հաստատումից հետո, ուժի մեջ կմտնի մայիսի 2-ից: Նա նաեւ հավելեց, որ Վրաստանում արտակարգ դրության եւ կարանտինի ռեժիմի խախտման համար տուգանքների համաճարակային հարց չի քննարկվում:

- Այս պատճամիջոցները լիովին համաչափ են, քանի որ այս պատասխանատվության հիմնական նպատակը մեր

հասարակությանը, նրանց առողջությունն ու կյանքը պաշտպանելն է,- ասաց Անրի Օխանաշվիլին:

Խստացումներ են նախատեսվում արտակարգ դրության եւ կարանտինի ռեժիմի երկակի խախտումն թույլ տված անձանց նկատմամբ: Ապրիլի 23-ին Վրաստանի խորհրդարանը երեք ընթերցումներով «Քրեական օրենսգրքում» եւ «Վարչական իրավախախտումների օրենսգրքում» հաստատեց նոր նորմերը:

Ինչպես ասաց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Մամուկա Միհնարաձեն, արտակարգ դրության եւ կարանտինի ռեժիմը երկրորդ անգամ խախտած անձը կենթարկվի մինչեւ 6 տարի ազատազրկման:

- Եթե արտակարգ դրություն հայտարարելուց հետո, սահմանված նորմերը խախտած անձը առաջին անգամ պատժվում էր 3000, իսկ իրավաբանական անձը՝ 15 հազար լարիով, որն արդեն հայտնի է հանրությանը, ապա խախտումը



կրկնելու դեպքում, անձը կենթարկվի մինչեւ 6 տարվա ազատազրկման,- հայտարարեց նա:

Ինչ վերաբերում է սահմանված տուգանքների վճարման կարգին, ապա Վրաստանի ներքին գործերի նախարարության տեղեկատվությամբ, արտակարգ դրության պայմանների խախտման համար տուգանված քաղաքացիները տուգանքը պետք է վճարեն 30 օրվա ընթացքում: Գերատեսչությունը նաեւ տեղեկացնում է, որ անձը տուգանքի համար կարող է բողոքել արտակարգ դրության ավարտից 10 օրվա ընթացքում:

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՋԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

նակարիքավոր խմբի, մեր կենսաթոշակառուների աջակցության մեխանիզմները, որոնք կհաստատվեն օրենսդրական մակարդակով: Մենք որոշեցինք, որ բոլոր կենսաթոշակառուների կենսաթոշակը կավելացվի առնվազն արժեզրկման ցուցանիշի հաշվառմամբ, ինչը փաստորեն կափոխհատուցի գնաճը կենսաթոշակառուների համար: Դա նշանակալի փաստ է սոցիալական կայունության պահպանման տեսանկյունից: Միաժամանակ, 70-ն անց կենսաթոշակառուները, բացի արժեզրկման տոկոսային ավելացման, նաեւ կունենան տնտեսական աճի 80 տոկոսով կենսաթոշակի ավելացման հնարավորություն, ինչը, գործնականում նշանակում է, որ 2021 թվականին յուրաքանչյուր կենսաթոշակառուի թոշակը կավելացվի 20 լարիով, իսկ 70-ն անց կենսաթոշակառուների՝ 25 լարիով: Այս արտոնություններից կօգտվի շուրջ 410 հազար կենսաթոշակառու,- ընդգծեց Գիորգի Գախարիան:

ԻՆՔՆԱՋԲԱՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄՑ ԴՏՈՆ, ԿՏՐՎԻ 300 ԼԱՐԻ Ի ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնելով կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագիրը, վարչապետ Գիորգի Գախարիան խոսեց նաեւ համավարակի արդյունքում աշխատանքը կորցրած ինքնազբաղ քաղաքացիների մասին: Նրա հավաստմամբ, նրանց նույնականացումն հաստատելուց վերջիններիս կտրամադրվի 300 լարիի միանվագ օգնություն:

- Բնականաբար, պետության համար ծայրաստիճան դժվար է ոչ պաշտոնական աշխատանքում ներառված կամ ինքնազբաղ քաղաքացիների նույնականացումը, քանի որ նրանք պաշտոնական եւ ոչ մի բազայում գրանցված չեն, թեպետ պետությունը պարտավորություն է ստանձնում սոցիալական օգնության ծառայության միջոցով, այդ մարդկանց նույնականացման առավելագույն պարզեցման ուղիով, տրամադրել 300 լարիի միանվագ օգնություն: Այդ նպատակով, պետական բյուջեից կառանձնացվի 75 միլիոն լարի,- նշեց Վրաստանի վարչապետը:

ԱՆՄԻՋԱՊԵՏ ԿԿԻՐԱՐԿՎԻ ՀԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԵՆԱՆԻՋՄԸ

Հենց գործարարի անձնական հաշվի վրա վավերացվի ավելցուկը, առանց որեւէ արգելքի, հավելյալ արժեքի հարկը (ՀԱՀ) կվերադարձվի գործարարին: Այդ մասին կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագրի շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան: Վարչապետի խոսքով, գործարարներին օգնելու նպատակով, կկիրարկվի ՀԱՀ-ի ավտոմատ վերադարձման մեխանիզմը, որի աղյուսնում գործարարները լրացուցիչ կատանան 600 միլիոն լարի: Միաժամանակ, վարչապետն ընդգծեց, որ դա վերաբերում է ճգնաժամային ժամանակահատվածին, ճգնաժամի պայմաններում գործարարներին օգնելու եւ ոչ հետճգնաժամային տնտեսական վերականգնման ծրագրի:

- Բացի ՀԱՀ-ի վերադարձման մեխանիզմի կիրարկումից, մենք որոշում ընդունեցինք, ըստ որի, հաջորդ մեկ տարվա ընթացքում բյուջեից ՀԱՀ-ի տեսքով լրացուցիչ 600 միլիոն լարի կվերադարձվի գործարարներին,- նշեց վարչապետը:

ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ ԿՏՐՎԻ ՀՈՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնելով հակաճգնաժամային կառավարական ծրագիրը՝ վարչապետ Գիորգի Գախարիան շոշափեց նաեւ մինչ օրս առանց գրանցման մնացած հողերի թեման՝ հայտարարելով, որ առաջիկա երեք տարիների ընթացքում իրականացվելու է շուրջ 1,2 միլիոն հեկտարի գրանցում: Նրա խոսքով, սույն միջոցառումը խիստ նշանակալից է, քանի որ այն ֆերմերներին ու ֆինանսական կառույցներին հողի մշակման հնարավորություն կընձեռնի: - Անհնար է գյուղատնտեսության զարգացումն առանց հողի համակարգային գրանցման հիմնախնդրի վերջնական կարգավորման: Այդ պատճառով, արդարադատության նախարարության հետ միասին ընդունեցինք որոշում, առաջիկա երեք տարիներին իրականացնել մինչ օրս չգրանցված 1,2 միլիոն հեկտարի համակարգային գրանցումը, ինչը թույլ կտա վերջնականապես օրակարգից հանել այդ հիմնախնդիրը,- ընդգծեց վարչապետը:

ԱՆՊԱՏԱՏԵՂԵՐԸ ՊԱՅՊԱՆՈՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵԿԱՄՏԱՅՐԱԿԻ ԲԱԺՆՈՎ ԿՏՐՎԵՆ ՆՊԱՍՏԵՐ

Հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ վեց ամսվա ընթացքում 750-ական լարիով աշխատատեղերը, պահպանած ընկերություններին եկամտահարկի բաժնով կտրվեն նպատներ: Բացի այդ, նույն կարգի նպատներ 750-1500 լարիի հաշվի վրա կստանան նաեւ այդ աշխատատեղերի աշխատողները:

- Փաստորեն, մենք դրանով օգնում ենք ինչպես Վրաստանի քաղաքացիներին, այնպես էլ գործարարներին, որ նրանք պահպանեն աշխատատեղերը: Այդ նպատակով, պետությունը կհատկացվի 250 միլիոն լարի,- նշեց վարչապետը:

3,5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ԳՐԱՄԱՍՄԱՅԻՆ ՄԵՆԵԶՄԵՆՏԻ ՀԱՄԱՐ

- Գոնաժամային մեներձեմնուի համար կծախսվի 3 միլիարդ 500 միլիոն լարի,- այդ մասին կառավարության հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին հայտարարեց վարչապետ Գիորգի Գախարիան: Նրա խոսքով, այդ գումարը չի նախատեսվում էկոնոմիկայի հետճգնաժամային վերականգնումը:



խաներ ունեցող ընտանիքներին: Գիորգի Գախարիան նաեւ նշեց, որ 6 ամսվա ընթացքում 600 լարիի օգնություն կտրվի նաեւ ցայտուն արտահայտված սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց եւ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին:

- Վրաստանում հաշվվում է սոցիալապես կարիքավոր, 65 000-100 հազար վարկանիշային միավոր ունեցող 70 հազար ընտանիք, մոտ 190 հազար մարդ, իսկ 0-ից մինչեւ 100 հազար վարկանիշային միավոր եւ 3-16 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքների թիվը հասնում է 21 հազարի, ընդհանուր առմամբ՝ 130 հազար մարդ: Նրանց պետությունը վեց ամսով կօգնի 600 լարի գումարով: Վեց ամսվա ընթացքում 600 լարիի օգնություն կտրվի նաեւ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց, որոնց թիվը Վրաստանում հասնում է շուրջ 40 հազարի: Այդ նպատակով պետությունը կհատկացվի 25 միլիոն լարի,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

30 ՀԱՉԱՐ ԼԱՐԻ ՓՈՔՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄ ՉԲԱՂՎԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉԻՆ

Հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, Գիորգի Գախարիան հայտարարությանը, միևնույն դրամաշնորհային ծրագիրը 30 հազար լարիով ավելացնում է գյուղի բնակիչ այն անձանց ֆինանսավորումը, ովքեր մտադիր են զբաղվել փոքր ձեռներեցությամբ: Վարչապետի հավաստմամբ, տեղական արտադրության զարգացումը նշանակալի է, քանի որ այդ ուղղված է տեղական պահանջների բավարարմանը: Դա առավել նշանակալի է գյուղական վայրերում, եւ այսօր ֆերմերներին ցուցաբերվող աջակցությունը առավել նշանակալից է դառնում, ակնհայտ է նաեւ ֆերմերների դերի կարևորությունը:

- Նախկինում այդ ծրագրի իրականացման համար ֆերմերներին տրվում էր 5 հազար լարի, ապա այդ գումարը հասցվեց 15-20 հազարի: Հիմա մենք որոշեցինք այն հասցնել 30 հազարի՝ այդ նպատակի համար հատկացնելով 40 միլիոն լարի: Դա իրատեսական օգնություն է փոքր ձեռներեցությամբ զբաղվելու մտադրություն ունեցող գյուղի բնակիչի համար,- նշել է վարչապետը:

ԵՐԿՐՈՒՄ ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐԻ ԶԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԻ, ԹԵՊԵՏ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ը ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԶԻ ՎԵՐԱՎԱՆՈՎՐԻ

- Վրաստանում ակադեմիական տարի չի հայտարարվի, թեւ մինչեւ սեպտեմբերի 1-ը դպրոցներում ուսուցումը չի վերսկսվի: Այդ մասին կառավարության հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան: Նրա խոսքով, կրթության նախարարությունը հաջողությամբ իրականացնում է հեռավար ուսուցման մեթոդը, իսկ ինչ վերաբերում է ազգային քննություններին, ապա դրանց անցկացման մեխանիզմները կպահպանվեն:

- Ինչպես միջնակարգ դպրոցում, այնպես էլ՝ բուհերի մի մասում բավականին հաջողությամբ իրականացվեց հեռավար ուսուցումը, ինչը թույլ է տալիս ասել, որ երկրում ակադեմիական տարի չի հայտարարվի: Ազգային քննություններին ոչինչ չի սպառնում, դրանք կանցկացվեն, ուղղակի կարող են լինել որոշակի հետաձգումներ: Կրթության համակարգի վերաբերյալ շնորհանդեսը կներկայացվի առանձին,- հայտարարեց վարչապետը:

ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 200-ԱԿԱՆ ԼԱՐԻ՝ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՎՈՐԶԻ ՄՆԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Ինչպես կառավարության հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, վեց ամսվա ընթացքում 200-ական լարի կտրվի նրանց, ովքեր առանց աշխատավարձի պահպանման զնացել են արձակուրդ:

- Ակնհայտ է, որ դա սահմանափակ նվազագույն է, որը այսօր երկիրը ի վիճակի է տալ, եւ բոլորը պետք է նկատի ունենան, որ կառավարության ու յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունն է, որ այն սուղ ռեսուրսները, որը հավաքել ենք սոցիալական օգնություն տալու համար, պետք է օգտագործենք արդյունավետ եւ արդարացի,- հայտարարեց վարչապետը:

600-ԱԿԱՆ ԼԱՐԻ ՍՈՑԻԱԼՊԵՏ ԿԱՐԻՔՎՈՐՆԵՐԻՆ

Կառավարության հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ պետությունը 600 լարիով օգնություն կցուցաբերի սոցիալապես կարիքավոր բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաեւ 65 000-100 000 սոցիալական վարկանիշային միավոր ու 3-16 տարեկան երե-